

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» Տաշխաթ

2022 թվականի N 113-ՇԿ


ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 23/11
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ կետերով և 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անվանացանկում և հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին» թիվ 23/11 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1) «ՎԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գլխի «Խորհրդական» տողում «3» թիվը փոխարինել «2» թվով, իսկ դրան հաջորդող «Ընդամենը» տողում «12» թիվը փոխարինել «11» թվով.
 - 2) «ՖԻՆԱՍՍՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գլուխը լրացնել «Կապի մասնագետ 1» տողով, իսկ «Ընդամենը» տողում «17» թիվը փոխարինել «18» թվով:
2. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անվանացանկում և հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին» թիվ 23/11 որոշման թիվ 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.
 - 1) ուժը կորցրած ճանաչել թիվ 2 հավելվածի 70-րդ կետը.
 - 2) թիվ 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 145.1. կետով.
«145.1. Կապի մասնագետ»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ 

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ